

լով չենք հասկընար պարզապէս՝ ինչպէս սովորութիւն է, հնագոյն վեհազունքն, որոնք յօգուտ եւ ի զարգացումս իրենց ազգին անխոնջ հանդիսացած են, այլ հարկաւ կը պարտաւորինք իմանալ նաեւ նորագոյն ժամանակի ազգատորմերն, որոնց վրայ իրենց ազգին նախնեաց սեպհական ոգին կը փայլի:

Օսմանեան մեծագոր Պետութեան հպատակ ազգայնոց ազգաբանութիւնն ընելու նպատակնիս է՝ մեր ազգին ազնուական ընտանեաց անուններն անկորուստ պահել յետագայ դարերուն: Բանի բանի երեւելի ընտանեաց եւ ոչ անունն կը յիշուի այժմ, վասն զի զանոնք ի զիր անցընելու՝ ժամանակակից պատմագիրք՝ կամ՝ գոնէ հրապարակագիրք անփոյթ եղած են: Բայց մեր միտքն է նաեւ գորաւոր սպացոյց մը տալ թէ այս հօր պետութեան հայ պաշտօնեայք, լիովին ճանչնալով իրենց վրայ դրուած ըեռան ծանրութիւնն՝ ըստ կարի ջանացած են ի գորութիւն պետութեան վարել իրենց պաշտօնն. եւ իրենց սեպհական սրամիտ հանձարովն եւ գործօն աշխուժիւն մեծապէս նպաստած են՝ այլեւայլ մեծ պաշտօններու փառաւոր զարգացման:

Հարկ չենք տեսներ հոս կանխելու ըսելու թէ այս ամէն յատկութիւնք՝ վերջին աստիճանի կատարելութեամբ կը